

ետք, միաբանութիւնը Պատրիարք Հօր գլխավորութեամբ, Քրիստոսի Գերեզմանէն Հանուած լոյսը կը տանին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար վառելու կանթեղներուն լոյսը: Երբ միաբանութեան երթը կը Հասնի Դաւիթի բերդը (քաղաքի Եաֆայի դրան մօտ), լուսահանը, որ կը կրէ Ս. Յարութեան լոյսով լուսաւորուած լապտերը, շուրջառ կ'առնէ: Նոյնպէս, Սրբազան Պատրիարքին կը տրուին շուրջառ, ձեռաց խաչ եւ գաւազան, եւ

բոլորը երգելով ու Թափօրով, սկառստներու նուազի առաջնորդութեամբ, Համարքայլ կ'երթան Ս. Յակոբ: Այնտեղ կը կարդացուի Մատթէոսի Աւետարանէն յետ Յարութեան Հատուածը (28: 16-20), եւ Պատրիարք Սրբազան Հօր «Քրիստոս յարեալ ի մեռելոց» աւետիսով ժողովուրդը կ'արձակուի:

Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան
Հուսահան

Մաղթանք

Լուսովդ քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք, եւ ի սուրբ խաչ քո, փրկիչ, Հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր. տուր մեզ գլխադադութիւն քո. եւ արա առ մեզ զողորմութիւն քո, մարդասէր տէր:

Աղօթք

Գոհանամք զքէն, տէր Աստուած մեր, որ երեւելի լուսով քով զուարճացուցեր զամենայն արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեանեան լուսաւորեցեր զՀաւատացեալս ի քեզ: Զօրացո եւ զմեզ, տէր, ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ ի տուրնջեանս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք, եւ Հանդերձեալ բարեացդ Հասցուք ընդ ամենայն սուրբս քո: Շնորհօք եւ մարդասիրութեամբ տեսանդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ոստղադութիւն ամենեցուն:

(Եւ ընդ Հոգւոյդ քում)

Աստուծոյ երկիրպագեսցուք:

(Առաջի քո տէր)

Ոստղադութիւն մեր եւ կեանք՝ որ ի Հօրէ առաքեցար, միածին Որդի Աստուծոյ՝ տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս: Տուր մեզ գլխադադութիւն քո՝ զոր շնորհքեր սրբոց քոց առաքելոց, փյնմամբ քո ի նոսա զկենդանացուցիչ եւ զամենազօր Հոգիդ քո սուրբ: Որպէս զի եւ մեք խաղաղացեալք յամենայն աշխարհական սահեցմանց՝ լիցուք սաճար եւ բնակարան աստուածային շնորհացդ. եւ զոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյդ Քրիստոս Աստուած մեր. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Ժամագիրք)